



*Համարը* N 360-Լ  
*Տիպը* Լոկալ որոշում  
*Սկզբնաղբյուրը* Հրապարակվել է կայքում  
11.04.2019

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն  
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 12.04.2019

*Ընդունման ամսաթիվը* 29.03.2019  
*Ստորագրման ամսաթիվը* 10.04.2019  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ-ՈՒՄ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 մարտի 2019 թվականի N 360-Լ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ՈՐՈՇ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում՝

1) պայմանագրային հիմունքներով գիտական կենտրոններին և ֆերմերային տնտեսություններին (այսուհետ՝ շահառու) տրամադրված սերմացուն ենթակա է վերադարձման 1:2 փոխհարաբերությամբ սերմանյութի կամ 1:1 փոխհարաբերությամբ դրամական արժեքի տեսքով՝ համաձայն հավելվածի.

2) շահառուները վերադարձման ենթակա սերմացուները հանձնում են համապատասխան մարզպետարանների տնօրինմանը՝ հետագա օգտագործման իրավունքով, անվճար հիմունքներով, որոնց վերաբերյալ մարզպետարանները սերմացուների բաշխումը կատարելուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնում են ամփոփ հաշվետվություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, իսկ 1:1 փոխհարաբերությամբ դրամական արժեքի վերադարձի դեպքում վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության հաշվեհամարին (900011023422):

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված գործողությունները շահառուների կողմից կատարելուց հետո դադարում են ծրագրով նախատեսված և ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և շահառուների միջև կնքված պայմանագրերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցվում է ծրագրի իրականացումը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան

2019 թ. ապրիլի 10  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
մարտի 29-ի N 360-Լ որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԻԿԸՆԴԵՂԵՆ ՈՐՈՇ  
ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ

Հ/հ	Շահառուի անունը (անվանումը)	Հատկացված սերմացուն	Հատկացված սերմացուի		Հետ վերադարձնելու ենթակա սերմացուի	
			քանակը (կգ)	արժեքը(դրամ)	քանակը (կգ)	արժեքը (դրամ)
1.	«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ	սիսեռ	250	287500	500	287500
2.	Այվազյան Ալբերտ	հնդկացորեն	100	62000	200	62000
		ոլոռ	250	132500	500	132500
		ոսպ	150	157500	300	157500
		սիսեռ	100	115000	200	115000
3.	Գաբրյան Հովհաննես	հնդկացորեն	100	62000	200	62000
		ոլոռ	250	132500	500	132500
		ոսպ	150	157500	300	157500
		սիսեռ	100	115000	200	115000
4.	Գևորգյան Գևորգ*	հնդկացորեն	100	62000	200	62000
		ոլոռ	250	132500	500	132500

		ռսսլ	250	262500	500	262500
		սիսեռ	100	115000	200	115000
5. Գևորգյան Հովհաննես		հնդկացորեն	100	62000	200	62000
		ռլռռ	250	132500	500	132500
		ռսսլ	150	157500	300	157500
		սիսեռ	100	115000	200	115000
6.	ՀՀ ԳՆ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ	ռլռռ	900	477000	1800	477000
7. Ղազարյան Մամիկոն		հնդկացորեն	100	62000	200	62000
		ռլռռ	250	132500	500	132500
		ռսսլ	150	157500	300	157500
		սիսեռ	100	115000	200	115000
8. Նալբանդյան Էդիկ		հնդկացորեն	4200	2604000	8400	2604000
		ռլռռ	800	424000	1600	424000
		ռսսլ	3100	3255000	6200	3255000
		սիսեռ	3500	4025000	7000	4025000
9. Պետրոսյան Հունան		հնդկացորեն	100	62000	200	62000
		ռլռռ	250	132500	500	132500
		ռսսլ	150	157500	300	157500
		սիսեռ	100	115000	200	115000
10. Սերգոյան Արա		հնդկացորեն	100	62000	200	62000
		ռլռռ	250	132500	500	132500

		նսպ	150	157500	300	157500
		սիսեռ	100	115000	200	115000
11. Ոսկանյան Խաչիկ		ինդկացորեն	100	62000	200	62000
		ոլոռ	150	79500	300	79500
		նսպ	100	105000	200	105000
		սիսեռ	150	172500	300	172500
12. Իվանյան Սևադա		ոլոռ	400	212000	800	212000
		նսպ	150	157500	300	157500
		սիսեռ	200	230000	400	230000
13. Մելիք-Թանգյան Նարեկ		ոլոռ	350	185500	700	185500
		նսպ	200	210000	400	210000
		սիսեռ	200	230000	400	230000
14. Խաչատրյան Գագիկ		ոլոռ	650	344500	1300	344500
		նսպ	300	315000	600	315000
<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>			<b>20000</b>	<b>16750000</b>	<b>40000</b>	<b>16750000</b>

\* Ծրագրի շրջանակներում տրամադրված սերմացուները, որոնք ցանքի համար չեն օգտագործվել և ցանքային պիտանելիությունը համապատասխանում է սերմացուների նկատմամբ սահմանված պահանջներին, ենթակա են նույն քանակությամբ հետ վերադարձման:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան